

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**

**ՍԱՄՎԵԼ ՅՈՒՐԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ**

**ՏՏՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ  
ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Ը.00.01- «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ  
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման  
ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ-2018

Աստենախոսության թեման հաստատվել է Հայաստանի պետական  
տնտեսագիտական համալսարանում

**Գիտական դեկան՝**

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
**Ասոմ Արտավազդի Վարդանյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր  
**Միքայել Վարագիատի Միքայելյան**

տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր  
**Գագիկ Սերգեյի Գալստյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

Հայ-ռուսական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի մարտի 16-ին, ժամը 13<sup>30</sup>-ին  
Երևանի պետական համալսարանում գործող << ԲՈՀ-ի տնտեսագիտության  
թիվ 015 մասնագիտական խորհրդում:

**Հասցե՝ 0009, ք. Երևան, Աբովյան փ., 52:**

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի  
գրադարանում:

**Սեղմագիրն առաքվել է 2018 թվականի փետրվարի 15-ին:**

015 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար  
տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

**Ա. Ս. Առաքելյան**

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Ատենախոսության թեմայի արդիականությունը:** Նորմատիվային իմաստով ցանկացած, այդ թվում նաև տնտեսական առաջընթացի նպատակը մարդկային զարգացումն է: Այս միտքը տարբեր ձևակերպությունով արտահայտվում է բազմաթիվ հեղինակների աշխատանքներում: Մասնավորապես ըստ հմանուել Կանտի՝ մարդուն որպես նպատակ, այլ ոչ թե միջոց դիտարկելը պարտադիր հրամայական է: Միաժամանակ ցանկալին և իրականությունը միշտ չեն, որ համընկնում են: Այսպես՝ տնտեսական ձեռքբերումները հաճախ չեն ուղեկցվում բնակչության մեծամասնության կենսամակարդակի բարձրացմամբ, ինչը պայմանավորված է նրանով, որ տնտեսական և սոցիալական ոլորտների միջև կապը խզվում է:

Հատկապես անցյալ դարի երկրորդ կեսից սկսած որակապես փոխվել են տեխնոլոգիաները, մեծացել են արտադրական հնարավորությունները, իսկ համաշխարհային ՀՆԱ-ն շարունակում է ամեն: Զուգահեռաբար խորացել է անհավասարությունը, միջինավոր մարդիկ ապրում են աղքատության պայմաններում, լուծված չեն կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիության հետ կապված խնդիրները: Բազմաթիվ հիմնահարցերի թվում առանձնանում է նաև շրջակա միջավայրի աղտոտումը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ դրա հետևանքները զգայի են հատկապես աղքատ բնակչության համար:

Ժենման արդիական է նաև Հայաստանի համար, քանի որ տնտեսական ամն ուղեկցվում է զանգվածային գործազրկությամբ, աշխատանքային ուսությունների կրճատմամբ և բնակչության ծերացմամբ: Պետության կողմից իրականացվող սոցիալական քաղաքականությունն իր հերթին ունի բազմաթիվ թերություններ՝ պայմանավորված կոռուպցիայով, ստվերային տնտեսությամբ, պետական բյուջեի անբավարար միջոցներով, ինչպես նաև ծախսերի արդյունավետության ոչ բարձր մակարդակով:

Տնտեսական և սոցիալական ոլորտների փոխազդեցության վերաբերյալ կատարվել են մի շարք հետազոտություններ: Հեղինակները նշում են, որ տնտեսական զարգացման գնահատման հիմքում պետք է գտնվեն ոչ թե պարզապես եկամուտն ու տնտեսական աճը, այլ կյանքի որակը: Զ. Ստիգլիջ, Ա. Սենի, Զ.Պ. Ֆիտոսիի գիտավորությամբ 2008թ. նոյնիսկ ստեղծվեց հանձնաժողով, որի նպատակն էր բացահայտել «ՀՆԱ» ցուցանիշի թերությունները և առաջարկել սոցիալ-տնտեսական առաջընթացը բնութագրելու այլնուրանքներ: Արդյունքում առաջադրվեցին խնդիրների լուծման տարրեր մոտեցումներ, որոնցում հատկապես կարևորվեց անմիջապես տնային տնտեսությունների կենսամակարդակի ուսումնասիրությունը:

ՀՀ-ում նոյնպես տարբեր հետազոտողներ վերլուծել են տնտեսական աճի, գործազրկության, անհավասարության, աղքատության խնդիրները: Միաժամանակ ՀՀ սոցիալական առաջնահերթությունների սահմանման, տնտեսական աճի որակի գնահատման, սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացման հարցերի հետ կապված նոր ուսումնասիրություններն անհրաժեշտ են:

**Հետազոտության նպատակը և խնդիրները:** Հետազոտության նպատակն է ՀՀ համար առանձնացնել տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթություններ,

բացահայտել դրանց իրագործման խոչընդուներն ու հնարավորությունները և առաջարկել սոցիալական քաղաքականության բարելավման հնարավոր ուժիներ:

Ենելով նպատակից՝ առաջարդությունները և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրության միջազգային փորձը,
- մեթոդաբանորեն հիմնավորել ՀՀ տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրությունը,
- Ներկայացնել մարդկային կապիտալի զարգացման խոչընդուներն ու հեռանկարները,
- հետազոտել անհավասարության և աղքատության բարձր մակարդակի պատճառները և հայցահարման հնարավոր ուժիները,
- բացահայտել զանգվածային գործազրկության պատճառները և զբաղվածության ապահովման միջոցները,
- վերլուծել ՀՀ սոցիալական քաղաքականության խնդիրները և բարելավման եղանակները:

**Հետազոտության օբյեկտը և առարկան:** Հետազոտության օբյեկտը տնտեսական և սոցիալական զարգացման փոխադրեցության հիմնահարցերն են, իսկ առարկան՝ ՀՀ բնակչության կենսամակարդակը, ժողովրդագրական իրավիճակը և պետության սոցիալական քաղաքականությունը:

**Հետազոտության մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը:**

Հետազոտության ընթացքում կիրառվել են վիճակագրական, համեմատական, երևոյթական և գործնթացների գրաֆիկական մեջնաբանման, Էկնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Առաջարդության խնդիրների լուծման համար տեսական հիմք են հանդիսացել տարբեր հեղինակների՝ սոցիալ-տնտեսական հիմնահարցերին վերաբերող գիտական աշխատանքները, ՀՀ օրենքները, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ կենտրոնական բանկի, Միավորված ազգերի կազմակերպության, Համաշխարհային բանկի, Աշխատանքի միջազգային կազմակերպության, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և այլ կառույցների գեկույցները, հետազոտությունները, աշխատանքային փաստաթղթերը և այլն: Տեղեկատվական հիմք են ծառայել վերոնշյալ մարմինների հրապարակումներն ու տվյալների բազաները: Անհրաժեշտությունից ենելով՝ վիճակագրական մեթոդների կիրառմամբ ապահովվել է տվյալների համարելիությունը:

**Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:**

Առենախոսության մեջ ստացված արդյունքներն ունեն տեսամեթոդական և կիրառական նշանակություն, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույցները ներկայացված են ստորև.

✓ Մշակվել է տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթությունների ընտրության մեթոդաբանական մոտեցում, որի համաձայն առաջնահերթ լուծում պահանջող կարող են դիտարկվել այն խնդիրները, որոնք հրատապ լինելուց բացի ունեն սոցիալական քննություններում բնույթ և բնակչության կողմից ընդունվել են որպես բարեկեցությանը խոչընդունող գիտական գործոններ: Դրանց լուծումը պետք է բխի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքներից, գտնվի հիմնարար արժեքային համակարգի շրջանակում:

✓ Բնակչության կենսապայմաններն արժանահավատ գնահատելու, ինչպես նաև սոցիալական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով առաջարկվել է <<-ում նվազագույն սպառողական զամբյուղ, նվազագույն աշխատավարձը, կենսաթոշակները, նպաստները սահմանելիս որպես ուղեցույց դիտարկել բնակչության հիմնական պահանջնությունների բավարարման (ինչը դեռևս լիարժեք չի ապահովվում) և կարողությունների զարգացման մոտեցումների գուգակցումը:

✓ Էկոնոմետրիկ մոդելավորման միջոցով բացահայտվել է, որ <<-ում տնտեսական աճի ազդեցույթունը թույլ է գործարկության կրճատման գործում, ինչը պայմանավորված է հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրներով, տարածքային անհամաչափ զարգացմամբ և աշխատաժամերի՝ առանց համապատասխան վարձատրության ավելացմամբ: Մոդելում որպես բացատրվող (կախյալ) փոփոխական է դիտարկվել ոչ թե գործարկության մակարդակը, այլ զբաղվածների թիվը, քանի որ գործարկության կրճատումը գգալիքուն ուղղորդվում է գործազրկությունի արտագաղթով:

**Հետազոտության գործնական նշանակությունը:** Տնտեսական և սոցիալական ոլորտների միջև փոխագրեցության ուսումնասիրությունը կարևոր է տեսության և պրակտիկայի տեսանկյունից, քանի որ հնարավորությունը է տալիս գնահատել տնտեսական առաջընթացը և մշակել անհրաժեշտ քաղաքականություն: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել մակրոտնտեսական քաղաքականություն իրականացնող կառույցների, ինչպես նաև սոցիալ-տնտեսական զարգացման հարցերով գրավող մասնագետների և ուսանողների կողմից:

**Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները:**

Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում, << Ֆինանսների նախարարության մակրոտնտեսական քաղաքականության վարչությունում, ինչպես նաև Միլանի պոլիտեխնիկում (Politecnico di Milano) կայացած ամառային դպրոցի շրջանակներում (2016թ. հունիսի 3-10):

Արդյունքները ներկայացվել են «Գիտելիք, նորաստեղծություն և զարգացում» (2015թ.) <<ՊՏՀ գիտաժողովում և «Արևելյան Ասիայի ռեգիոնալ զարգացում, ռեգիոնալ գիտության հեռանկարները» սեմինարի ընթացքում (<<ԿԲ, 2016թ.): <<Հիմնական դրույթները և արդյունքները հրապարակվել են գիտական 4 հոդվածներում:

Հետազոտության արդյունքների մի մասն այժմ կիրառվում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսագիտության տեսության ամբիոնում և << Ֆինանսների նախարարությունում:

**Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:** Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ծավալը, առանց հավելվածների, կազմում է 106 էջ, պարունակում է 9 աղյուսակ, 26 գծապատկեր և 9 հավելված:

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

**Ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, սահմանվել են հետազոտության նպատակը և խնդիրները: Ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, մեթոդաբանական, տեսական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և գործնական նշանակությունը:

Անդենախոտայթյան առաջին՝ «**Տնտեսական գարգացման սոցիալական առաջնահերթությունների հայեցակարգային հիմքերը» գլխում նախ ներկայացված են տնտեսական և սոցիալական ոլրոտների փոխազդեցության վերաբերյալ գրականության ուսումնասիրության արդյունքները: Այսպես՝ տնտեսական գարգացման վերջնանպատակը մարդկային զարգացումն է, հետևաբար այն առավելապես ուղղված կլինի դրա իրագործմանը, եթե տնտեսական ցուցանիշների բարեկարգությունը սոցիալական խնդիրների լուծմամբ: Սոցիալական ոլրոտն ունի առաջնային կարևորություն, ինչի մասին վկայում է նաև այն, որ 2015թ. տնտեսագիտության Նորեյան մրցանակը շնորհվեց Ա. Դիթոնին՝ աղքատությանը, սպառմանը, բարեկեցությանը վերաբերող հետազոտությունների համար<sup>1</sup>: Խորացող սոցիալական խնդիրները գտնվում են ոչ միայն տնտեսագետների, սոցիոլոգների, քաղաքագետների, այլև մյուս բնագավառների ներկայացուցիչների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես՝ Հռոմի պապ Ֆրանցիսկոսն, իր ուղերձում (Encyclical Letter) անդրադառնալով անհավասարության, աղքատության, միգրացիայի, շրջակա միջավայրի աղտոտման և այլ հարցերին, նշում է, որ խնդիրի վերաբերյալ համակարգված պատկերացում ունենալու համար անհրաժեշտ է համադրել գիտության տարբեր բնագավառներից ստացված գիտելիքները<sup>2</sup>:**

Տնտեսական ու սոցիալական ոլրոտները փոխկապակցված են, և հաճախ դժվար է դրանց առանձնացնելլ: Անհավասարության բարձր մակարդակի և աղքատության կրճատումը, գրավվածության ապահովումը կարելի է դիտարկել ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական տեսանկյունից: Տնտեսական գարգացումը նպաստում է սոցիալական խնդիրների լուծմանը: Մասնավորապես՝ ներառական շուկաների (inclusive markets) ձևավորման միջոցով առաջանում են գործազրկության և աղքատության կրճատման պայմաններ<sup>3</sup>: Իր հերթին սոցիալական զարգացման միջոցով բարենպաստ միջավայր է ստեղծվում տնտեսական առաջընթացի համար: Խորականության վերացումը, արդարության և վատահության մթնոլորտի ստեղծումը տնտեսական իրավիճակի կայունացման, արդյունավետության և արտադրողականության բարձրացման գործուներից են:

Երկար տարիներ որպես տնտեսական զարգացման չափորոշիչ ընդունվել է մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ-ն, սակայն Գ. Մյուլդալը, Ա.Սենը, Զ. Ստիգլիցը և մյուսներն

<sup>1</sup> Deaton A., Prize Lecture: Measuring and Understanding Behavior, Welfare, and Poverty, available at [https://www.nobelprize.org/nobel\\_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html](https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/2015/deaton-lecture.html)

Deaton A., The Great Escape: Health, Wealth, and the Origins of Inequality, Princeton University Press, 2013

<sup>2</sup> Encyclical Letter Laudato Si' Of The Holy Father Francis On Care For Our Common Home, pp. 82-83, available at [http://w2.vatican.va/content/francesco/en/encyclicals/documents/papa-francesco\\_20150524\\_enciclica-laudato-si.html](http://w2.vatican.va/content/francesco/en/encyclicals/documents/papa-francesco_20150524_enciclica-laudato-si.html)

<sup>3</sup> Acemoglu D, Robinson J., Why Nations Fail, The Origins of Power, Prosperity, and Poverty, Crown Business, New York, 2012, p. 77

առաջադրեցին այն տեսակետը, որ զարգացումն ու բարեկեցությունը բազմաբովանդակ երևույթներ են, և հնարավոր չէ միայն տնտեսական աճով բացատրել այն: Մյուրդալը զարգացումը կապեց ինստիտուցիոնալ միջավայրի, արտաքին տնտեսական հարաբերությունների, ժողովրդավարության հարցերի և այլին հետ<sup>4</sup>: Ա. Սենն այն դիտարկեց որպես ազատության ընդլայնման, այլ ոչ թե պարզապես եկամտի աճի գործընթաց<sup>5</sup>:

Զ.Ստիգլիցի կարծիքով ՀՆԱ-ն չի կարող ամբողջությամբ բնութագրել կենսապայմանները, քանի որ, օրինակ, առողջապահության ոլորտում անարդյունավետության հետևանքով ծախսերի ավելացումը նպաստում է ՀՆԱ աճին, սակայն դրական ազդեցություն չի ունենում բնակչության կյանքի որակի բարելավման առողմությունը: Բացի այդ, ՀՆԱ-ի հաշվարկի մեջ ներառված չէ դրա ստեղծման ժամանակ շրջակա միջավայրին հասցված վնասի չափը, ինչի հետ կապված՝ հեղինակն առաջարկում է կիրառել նաև «կանաչ ՀՆԱ» գաղափարը, ըստ որի՝ զուտ ներքին արդյունքը հարկավոր է ճշգրտել բնական ռեսուրսների սպառման և շրջակա միջավայրին հասցված վնասի չափով<sup>6</sup>:

Տնտեսական աճի և մարդկային զարգացման փոխազդեցությանն անդրադարձել է նաև Գ. Ռանիսը՝ նշելով, որ անհավասարության մակարդակը և պետական ծախսերի ուղղությունն ու արդյունավետությունը դրա վրա ազդող գիշավոր գործոններից են<sup>7</sup>: Այս խնդիրները գտնվում են նաև հայազգի տնտեսագետների ուշադրության կենտրոնում: Մասնավորապես < Աղաջանյանի կարծիքով տնտեսական համակարգի իրական վիճակը գնահատելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև ՀՆԱ աճի որակին, որը պայմանավորված է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացմանը<sup>8</sup>: Ա. Գրիգորյանը նշում է, որ տնտեսական աճի և տնտեսական զարգացման միջև գոյություն ունի բարդ դիալեկտիկական փոխկապվածություն, որն արտահայտվում է տնտեսության քանակական և որակական բնութագրիչների փոխայմանավորվածությամբ: Ըստ հեղինակի՝ տնտեսական զարգացումը ենթադրում է փոփոխություններ հասարակության տնտեսական և սոցիալական կառուցվածքում, որոնց արդյունքում յուրաքանչյուր նոր սերունդ բարեկեցության ավելի բարձր մակարդակի է հասնում, քան իր նախորդները<sup>9</sup>:

Ալենախոսության առաջին գիսում ուսումնասիրվել են նաև սոցիալական առաջնահերթությունների ընտրության միջազգային փորձը, ձեռք բերված հաջողությունները, ներկա խնդիրներն ու հետագա անելիքները: Այնուհետև մեթոդաբանորեն հիմնավորվել է << տնտեսական զարգացման սոցիալական

<sup>4</sup> Myrdal G., Prize lecture: The Equality Issue In World Development, 1975, available at

[http://www.nobelprize.org/nobel\\_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html](http://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1974/myrdal-lecture.html)

Myrdal G., Asian Drama: An Inquiry Into the Poverty of Nations, Twentieth Century Fund, New York, 1968

<sup>5</sup> Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, See particularly chapter 1

<sup>6</sup> Stiglitz J., The Price of Inequality. Allen Lane, an imprint of Penguin Books, London, 2012, pp. 182-186

<sup>7</sup> Ranis G., Human Development and Economic Growth, Economic Growth Center, Center Discussion Paper No 887, Yale University, May 2004, available at <http://ssrn.com/abstract=551662>, pp. 1-8

<sup>8</sup> Աղաջանյան Հ., Տնտեսական աճի որակի հարցի շուրջ, Քանրեր ՀՊՏՀ-ի, Երևան 2013թ., N 4, Էջ 31

<sup>9</sup> Գրիգորյան Ա., Տնտեսական աճի և տնտեսական զարգացման սահմանազատման չափանիշները, Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, N4, Երևան 2012թ., Էջ 186

առաջնահերթությունների ընտրությունը: Այսպես՝ առաջնահերթ լուծում պահանջող կարող են դիտարկվել այն խնդիրները, որոնք.

**1. Հրատապ լուծում են պահանջում:** Իհարկե, սոցիալական խնդիրները հաճախ բավարարում են այս չափանիշին, սակայն կան այնպիսինները (օրինակ՝ գործազրկությունը և աղքատությունը), որոնք ուղղակիորեն խոչընդոտում են մարդու բնականոն կենսագործունեությունը և ազդում անգամ առողջական կարգավիճակի վրա: Հետևաբար առաջնահերթություն սահմանելը կախված է նրանից, թե կարելի՞ է արդյոք դա հետաձգել, թե՞ ոչ:

**2. Սոցիալապես ընդգրկուն բնույթ ունեն:** Ըստ <<ԱՎԾ հետազոտությունների՝ 2016թ. բնակչության 18%-ը գործազրկ է եղել<sup>10</sup> (հաշվի առնելով նրանց թվաքանակը, ովքեր աշխատանք չեն փնտրել, սակայն պատրաստ են եղել անմիջապես անցնել աշխատանքի՝ ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ ցուցանիշն իրականում կազմել է 24.4%), իսկ 29.4%-ը՝ աղքատ<sup>11</sup>: Բարձր է նաև անհավասարության մակարդակը. Զինիի գործակիցը 2016թ. կազմել է 0.375<sup>12</sup>: Մրա հետևանքով որակյալ կրթության և առողջապահական ծառայությունների հասանելիությունը ցածր աստիճանի վրա է գտնվում, ինչը խոչընդոտում է մարդկային զարգացումը:

**3. Բնակչության կողմից ընդունվել են որպես բարեկեցությանը խոչընդոտող գիշավոր գործոններ:** Սա կարևոր փաստ է. օրինակ՝ Ա. Սենը նշում է, որ հասարակական ընտրությունն անհրաժեշտ է տարաբնույթ սոցիալական խնդիրների բացահայտման և լուծման համար<sup>13</sup>: Հետազոտական ուսուլությունների կովկասյան կենտրոնի կողմից իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ հարցված բնակչության կարծիքով՝ գործազրկությունը, աղքատությունը, առողջապահական ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը <<գիշավոր խնդիրներն են<sup>14</sup>: Բացի այդ, ըստ <<ԱՎԾ տվյալների՝ ոչ պարենային առաջնային կարիքների բավարարումը, բնակարանային հիմնահարցը, սննդի պահանջմանը, առողջությանը, երեխաների կրթության հետ կապված հարցերը բնակչության հիմնական խնդիրներն են<sup>15</sup>:

**4. Այդ խնդիրների լուծումը պետք է բխի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքներից:** Արդարության պահպանումն առավել ևս կարևոր է այն ընտրության ժամանակ, որը վերաբերում է ողջ երկին: Տնտեսական զարգացումն առողջ առաջնարար է, եթե այս կամ այն կերպ վերաբերում է հանրության յուրաքանչյուր անդամին<sup>16</sup>, հակառակ դեպքում խախտվում է արդարության սկզբունքը: Այս կապակցությամբ տեղին է մեջբերել Ա. Սմիթի այն խոսքերը, որ ոչ մի հասարակություն անկանած չի կարող լինել բարգավաճող և երջանիկ, եթե նրա

<sup>10</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-մարտին, Երևան 2017թ., էջ 102

<sup>11</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 43

<sup>12</sup> Աղյուրը տե՛ս նոյն տեղում, էջ 64

<sup>13</sup> Sen A., Lecture to the memory of Alfred Nobel, The Possibility of Social Choice, 1998, available at [https://www.nobelprize.org/nobel\\_prizes/economic-sciences/laureates/1998/sen-lecture.html](https://www.nobelprize.org/nobel_prizes/economic-sciences/laureates/1998/sen-lecture.html)

Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, See chapter 11

<sup>14</sup> The Caucasus Research Resource Center, Caucasus Barometer 2015 Armenia dataset, available at <http://caucasusbarometer.org/en/cb2015am/IMPISS1/>

<sup>15</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 211

<sup>16</sup> Վարդապյան Ա., Տնտեսական զարգացման հայցակարգային ընկալիումները, ԲանկերՀՊԸՀ, Երևան 2013թ., N4, էջ 13

անդամների մեծ մասն աղքակը է և դժբախսդ<sup>7</sup>: Վերոնշյալ հիմնախնդիրների լուծումը վերաբերում է ողջ հասարակությանը, քանի որ դրա արդյունքում ծևավորվում է զարգացող սոցիալ-տնտեսական համակարգ և առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ:

Ինչ վերաբերում է արդյունավետությանը, ապա դա արտահայտվում է նրանով, թե իրավիճակի բարելավումն ինչպես և ինչ չափով է ուղղված տնտեսական զարգացման ընդհանուր նպատակի իրագործմանը՝ մարդկային զարգացմանը: Դրան կարող են նպատել տարբեր գործոններ, որոնց շարքում առանձնանում է գործազրկության և աղքատության կրճատումը (հատկապես, եթե տարածված են): Մասնավորապես <<Երեխաների 34.2%-ը (կոչիտ հաշվարկով յուրաքանչյուր երրորդ երեխա) ապրում է աղքատության պայմաններում<sup>18</sup>, որի գլխավոր պատճառներից է այն, որ ծնողները գործազրկության կամ ցածր եկամտի հետևանքով չեն կարողանում բավարարել ընտանիքի նվազագույն պահանջները: Սա և մարդկային կայուն զարգացումն անհամատեղի երևույթներ են:

**5. Խնդիրների լուծումը պետք է գտնվի հիմնարար արժեքային համակարգի շրջանակում:** Առաջնահերթություն սահմանելիս չի կարելի անտեսել սա, քանի որ քանակապես գնահատելի արդյունքներից բացի կարևոր են նաև ոչ նյութական ձեռքբերումները: Որպես միջազգային փորձի օրինակ կարելի է նշել այն, որ Հազարամյակի զարգացման նպատակները հիմնված էին հետևյալ արժեքների վրա. ազատություն, հավասարություն, համերաշխություն, հանդուրժողականություն, համատեղ պատասխանատվություն: Նպատակները, որոնք չեն համապատասխանում այս և նման արժեքներին, ի վերջո հանգեցնում են խորականության և անկայունության:

Եվներով վերոնշյալ չափանիշներից և ընդհանրացներով միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները՝ որպես <<տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթություններ առանձնացվել են հետևյաները.

- մարդկային կապիտալի պաշարի ծևավորումը, զարգացումը և պահպանումը,
- անհավասարության բարձր մակարդակի կրճատումը և աղքատության հաղթահարումը,
- աշխատատեղերի ստեղծումը և գործազրկության կրճատումը (ընդհուպ մինչև դրա բնական մակարդակը):

Առաջնահերթությունները կարելի է սահմանել ըստ ժամանակահատվածի. կարճաժամկետում և միջնաժամկետում որպես նպատակ կարելի է դիտարկել գործազրկության, անհավասարության և աղքատության մակարդակների կրճատումը, իսկ երկարաժամկետում՝ լրիվ գրավվածության ապահովումը և աղքատության հաղթահարումը: Մարդկային կապիտալի պաշարի ծևավորումը, զարգացումը և պահպանումն անընդհատ շարունակվող գործընթացներ են:


Այսնախուսության երկրորդ՝ «<<սոցիալական առաջնահերթությունները մարդկային զարգացման համատեքստում» գլխում ներկայացված են մարդկային կապիտալի զարգացմանը, անհավասարությանը, աղքատությանը, գործազրկությանը վերաբերող վերլուծությունների արդյունքները: Այսպես՝ առողջական կապիտալի

<sup>17</sup> Smith A., An Inquiry Into the Nature and Causes of the Wealth Of Nations, republished, edited by R.H. Campbell and A.S. Skinner edition, Liberty Press/Liberty Classics, 1981, book 1, chapter 8, p. 96

<sup>18</sup> Աղյուրը՝ «ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 98

զարգացման առումով հարկավոր է նշել, որ որակյալ առողջապահական ծառայությունների ոչ բավարար մատչելիությունը ՀՀ գյուղավոր խնդիրներից է: Սա հիմնավորվում է նրանով, որ եթե 2016թ. հիվանդության դեպքում ոչ աղքատների 42.3%-ն է դիմել թժշկական խորհրդատվության կամ բուժման, ապա աղքատների (առանց ծայրահեռ աղքատների)՝ 27.3%-ը և ծայրահեռ աղքատների՝ 17.4%-ը<sup>19</sup>:

Առողջական կապիտալի զարգացման տեսանկյունից կարևոր է առողջապահության ոլրոտում կատարվող ծախսային բեռնի բաշխումը: Պետական ծախսերի կշիռը ՀՀ-ում 2016թ. կազմել է շուրջ 35%<sup>20</sup>: Համեմատության համար նշենք, որ սոցիալական կողմնորոշում ունեցող երկրներում (Դանիա, Նորվեգիա, Շվեդիա) ցուցանիշը կազմում է շուրջ 85%<sup>21</sup>: ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլրոտում կատարված ծախսերն աճի միտում են ունեցել 1996-2016թթ., սակայն 1998-2002թթ., ինչպես նաև 2009-2013թթ. նկատվել է ՀՀ-ում դրանց կշիռ նվազում (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. ՀՀ պետական բյուջեից առողջապահության ոլրութիւն ուղղված ծախսերը և դրանց կշիռը ՀՀ-ում, 1996-2016թթ.<sup>22</sup>

Կրթական կապիտալին անդրադառնալիս հարկավոր է նշել, որ սոցիալ-տնտեսական վատ պայմանների հետևանքով 2016-2017 ուսանարության դպրոցից հեռացել է 174 երեխս<sup>23</sup>: Խնդիրներ կան նաև բարձրագույն կրթության հասանելիության հետ կապված, քանի որ ցածր է բնակչության վճարունակությունը:

<sup>19</sup> Աղյուրը՝ տե՛ս նոյն տեղում, էջ 157


<sup>20</sup> Ցուցանիշը ստացել ենք ՀՀ առողջապահության ազգային ինստիտուտից:

<sup>21</sup> Աղյուրը՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների բազով՝ <http://apps.who.int/gho/data/view.main.HEALTHEXPATRITIONDK?lang=en>

<sup>22</sup> Աղյուրը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ ([http://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetutyun/](http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetutyun/)) և ՀՀ ազգային վիճակաբական ծառայության տվյալների բազով (<http://armstat.am/am/?nid=202>): Ազգային հաշվետրի համակարգ 2003 ստանդարտի 2015-2016թթ. և Ազգային հաշվետրի համակարգ 2008 ստանդարտի 1996-2011թթ. ՀՀ-ուն հաշվարկվել է մեր կողմից, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն այն չի հապաղակել:

<sup>23</sup> Աղյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին, Երևան 2017թ., էջ 49

ՀՀ պետական բյուջեից կրթության և գիտության ոլորտում կատարված ծախսերն աստիճանաբար աճել են 1996-2009թթ.: Դրանց կշիռը ՀՆԱ-ում նվազել է 2000-2002թթ., այնուհետև վերընթաց բնույթ է ունեցել մինչև ճգնաժամը: Ոլորտին ուղղված ծախսերը կայուն չեն եղել, և դրանց կշիռը ՀՆԱ-ում կրճատվել է 2009-2013թթ.: Ֆինանսավորումը նորից աճել է 2014-2015թթ., որից հետո գտնվել է նոյն մակարդակում (տե՛ս գծապատկեր 2):



Գծապատկեր 2. ՀՀ պետական բյուջեից կրթության և գիտության ոլորտին ուղղված ծախսերը և դրանց կշիռը ՀՆԱ-ում, 1996-2016թթ.<sup>24</sup>

Մարդկային կապիտալի զարգացման նպատակով հարկավոր է բարձրացնել առողջապահության և կրթության ոլորտներին ուղղված դրամական հատկացումների աճի տեմպը: Կարևոր է նաև պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը, քանի որ այն միջոցները, որոնք անարդյունավետ են օգտագործվում, կարող են ուղղվել տարբեր խնդիրների լուծմանը:

Անհավասարության հարցին անդրադառնախ վիճակագրական տարբեր տվյալների միջոցով հիմնավորվել է, որ այն խորանում է Հայաստանում: Կարևորվել է ոչ միայն եկամտային, այլև հարստության անհավասարության ուսումնասիրությունը, որի կրճատման նպատակով տարբեր հետազոտողներ առաջարկում են հարկել այն (մասնավորապես գույքը) արոգրեսիվ հարկատեսակներով<sup>25</sup>: Գույքահարկի կշիռը ՀՀ համախմբված բյուջեի հարկային եկամուտներում կայուն բնույթ է ունեցել 2001-2016թթ.<sup>26</sup>,

<sup>24</sup> Աղյուղը՝ ՀՀ պետական բյուջեի հաշվետվություններ ([http://minfin.am/hy/page/petakan\\_byujei\\_hashvetvutyun/](http://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvutyun/)) և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների բազա (<http://armstat.am/am/?nid=202>): Ազգային հաշվետրի համակարգ 2003 ստանդարտի 2015-2016թթ. և Ազգային հաշվետրի համակարգ 2008 ստանդարտի 1996-2011թթ. ՀՆԱ-ն հաշվարկվել է մեր կողմից, քանի որ ՀՀ ԱՎԾ-ն այն չի հրապարակել:

<sup>25</sup> Stiglitz J., The Price of Inequality. Allen Lane, an imprint of Penguin Books, London, p. 167

Atkinson T., Inequality: What Can be Done?, Harvard University Press, 2015, pp. 179-205

<sup>26</sup> Պայմանավորված ՀՀ պետական բյուջեի ցուցանիշների դասակարգման փոփոխությամբ (2008թ.)՝ անհրաժշտ հաշվարկների միջոցով ապահովվել է վիճակագրական շարքերի համարենիշությունը:

Տվյալների աղյուղը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցհայտնեական վիճակը 2017 թվականի հունվար-մայիսին, Երևան 2017թ., էջ 82

իսկ գոյքի կադաստրային բազային արժեքի վերագնահատումը (ինչի հիման վրա իրականացվում է հարկումը) տեղի է ունեցել մեծ ընդհատումներով: Մասնավորապես քարե շինությունների (բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների) 1 քառ. մետրի կադաստրային բազային արժեքը սահմանվել է 2003թ. և կազմում է 255000 դրամ<sup>27</sup>: Ըստ <<ԱՎԾ տվյալների՝ Երևան քաղաքի օրինակ, Կենտրոն վարչական շրջանում բազմաբնակարան շենքերի 1 քառ. մետրի մակերեսի շուկայական միջին գինը 2017թ. հիկումբերին կազմել է 455800 դրամ<sup>28</sup> (բնակարանների վաճառքով գրանցվող ընկերությունները միջնում ավելի բարձր գին են սահմանում): Հետևաբար գոյքի կադաստրային արժեքի և շուկայական գին միջև առկա խզվածքը մեծ է: Սա վկայում է այն մասին, որ անհրաժեշտ է վերանայել հարկային բաղաքականությունը՝ ավելացնելով հարստության հարկման բաժինը:

<<-ում անհավասարության խորացման պատճառներից են բաղաքական ռենտայի հետապնդումը, կոռուպցիան, անհավասարությունը մարդկային կապիտալում, թույլ արհմիությունները: Հարց է առաջանում, թե որոնք են անհավասարության կրճատման ուղիները: Նաև հարկավոր է նշել, որ խորը մեխանիկորեն ձևավորված և լրիվ հավասարության մասին չէ (այն նոյնպես դրական երևույթ չէ): Դրա կրճատմանը կարող է նպաստել պրոգրեսիվ հարկաբյուջետային բաղաքականությունը: Միաժամանակ խնդիրը հնարավոր չէ լուծել միայն եկամուտների և հարստության վերաբաշխման ճանապարհով: անհավասարության կրճատումը պահանջում է բաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում համալիր միջոցառումների հրականացում:

Աղքադության խնդիրը սերտորեն կապված է անհավասարության հետ: <<-ում աղքատության մակարդակը (ըստ սպառման ազրեգատի) 2016թ. կազմել է 29.4%, իսկ ծայրահեղ աղքատությունը՝ 1.8%: Այն տարբերվում է ըստ տարածաշրջանների: Դրա ամենացածր մակարդակն արձանագրվել է Արագածոտնում (15.7%), իսկ ամենաբարձրը՝ Շիրակում (45.5)<sup>29</sup>:

Այն, որ բնակչության եկամուտները հաճախ չեն բավականացնում հիմնական պահանջմունքները բավարարելուն, արտահայտվում է նաև նրանով, որ այստեղ առկա է աշխատողների աղքատությունը<sup>30</sup>: <<-ում 2016թ. նվազագույն ամսական աշխատավարձը կազմել է 55000 դրամ (դեռևս գտնվում է նոյն մակարդակում)<sup>31</sup>, իսկ աղքատության վերին գիծը՝ 40867 դրամ<sup>32</sup>, սակայն բազմազավակ ընտանիքը, որտեղ ծնողներն աշխատում են նվազագույն աշխատավարձով, կիսունքի ծանր կացության մեջ (նոյնիսկ պետության կողմից ընտանեկան նպաստի տրամադրման դեպքում): Բացի այդ, համաձայն Սոցիալական իրավունքի Եվրոպական հանձնաժողովի կողմից ներկայացված

(շարունակություն) <<ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրը, Երևան 2001թ., 2002թ., 2003թ., 2008թ., 2013թ. և 2016թ. հրապարակումներ, համապատասխանարար 303-րդ այլուսակ (2001թ.), 416-րդ, 388-րդ և 399-րդ, 354-րդ և 365-րդ, 383-րդ, 379-րդ էջեր

<sup>27</sup> Աղյուրը՝ <<Ենքերի, շինությունների գնահատման կարգեր, «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի հավելված, Երևան 2002թ., ընդունվել է 26.12.2002թ., ուժի մեջ է մտել 01.01.2003թ.

<sup>28</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվարի կույտներին, Երևան 2017թ., էջ 137

<sup>29</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 46

<sup>30</sup> Աղյուրը տես նոյն տեղում, էջ 60

<sup>31</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրը, Երևան 2017թ., էջ 97

<sup>32</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 40

«Նախադեպային իրավունքի վերլուծական ամփոփագրի»՝ նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցության ընդունելի շեմ է 50-% 60%-ը<sup>33</sup>: <<-ում ցուցանիշը 2016թ. կազմել է շուրջ 42%<sup>34</sup>: Աշխատողների աղքատությունը պայմանավորված է նաև աշխատավարձի ցածր գնողունակությամբ: Իրական աշխատավարձի կուտակյախն աճը 1999-2016թթ. շուրջ 2 անգամ փոքր է եղել անվանականի աճից<sup>35</sup>:

Անհավասարության, աղքագրության և դրանց հերևանքների գիշավոր պարագաները գործադրկությունն է, որն ըստ <<ԱՎԾ տվյալների՝ 2016թ. կազմել է 18.0%<sup>36</sup>: Ասենախոսության մեջ վերլուծվել է այն, թե ինչպես է տնտեսական աճը նպաստում գործադրկության կրճատմանը: Միգրացիայի միջազգային կազմակերպության և <<ԱՎԾ կողմից իրականացված հետազոտության համաձայն <<-ից հեռացանքների 62.8%-ը գործազրուկ է<sup>37</sup>: Հետևաբար գործադրկության մակարդակի կրճատումը զգալիորեն ուղղորդվում է գործազրուկների արտաքայթում: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ուսումնասիրներ է իրական ՀՀ-ի և գրադադարների թվի շարժընթացը:

Հետազոտության նպատակով օգտագործել ենք Էկնոմետրիկ մոդելավորման գործիքակազմը՝ EVIEWS ծրագրային փաթեթի միջոցով կառուցելով գծային ռեգրեսիոն մոդել: Այն գնահատել ենք փորբագույն քառակույների մեթոդով: Մոդելում որպես բացատրվող (կախյալ) փոփոխական է դիտարկվել զբաղվածների թիվը (վիճակագրական մեթոդների կիրառմամբ ապահովվել է տվյալների ժամանակային շարքերի համադրելիությունը): Ցանկայի կիներ օգտագործել նոր ստեղծված աշխատատեղերի թիվը, սակայն այն ստացվում է միայն <<զբաղվածության պետական գործակալության հետ համագործակցող գործառնությունների կողմից աշխատողների նկատմամբ ներկայացրած պահանջի հիման վրա: Սա չի կարող ներկայացնել նոր աշխատատեղերի վերաբերյալ ամբողջական պատկերը:

Բացատրող (անկախ) փոփոխականներն են՝ իրական ՀՀ-ն և սպառողական գների ինդեքսը: Զբաղվածների թվի շարժընթացի վրա ազդում են նաև այլ գործններ, որոնք ներառված չեն մոդելում (միգրացիան, կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով աշխատանքից հեռանալը, աշխատավարձը և այլն): Փորձել ենք կիրառել միգրանտների թիվը, սակայն, պայմանավորված հատկապես վիճակագրական շարքի հատկանիշներով, արդյունքի որակը գործադրության մեջ: Կենսաթոշակային տարիքը լրանալու պատճառով աշխատանքից հեռացողների վերաբերյալ եռամսյակային տվյալներ հրապարակված չեն, իսկ աշխատավարձն արդեն իսկ ներառված է ՀՀ-ի մեջ: Հաշվի առնելով այն, որ զբաղվածների թվի շարքն ունի իներցիոն բնույթ՝ մոդելում ներառել ենք AR(1) (առաջին կարգի ավտոռեգրեսիվ), իսկ պատահական շոկերը մոդելավորելու նպատակով՝ MA(4) (սահող միջին) պրոցեսները:

<sup>33</sup> The European Committee of Social Rights, Digest of The Case Law of The European Committee of Social Rights, 2008, p. 43

<sup>34</sup> Հաշվարկել ենք՝ կիրառելով զուտ աշխատավարձերի արժեքները:

<sup>35</sup> Հաշվարկն իրականացվել է հետինակի կողմից:

Տվյալների աղյուրը՝ <<ԱՎԾ տվյալների թավանական վիճակը՝ 2017 թվականի հունվար-մարտին, Երևան 2017թ., էջ 102

<sup>36</sup> Աղյուրը՝ <<ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը՝ 2017 թվականի հունվար-մարտին, Երևան 2017թ., էջ 102

<sup>37</sup> Աղյուրը՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Հայաստանի միգրացիայի վերաբերյալ տնային տնտեսությունների հետազոտության մասին գեկույց, Երևան 2014թ., էջ 80-81

Բոլոր ցուցանիշները ներկայացված են աճի ինդեքսներով (նախորդ տարվա նույն եռամսյակի նկատմամբ): Դրանք բավարարում են ստացիոնարության պայմանին: Մողելի արդյունքները վկայում են, որ տնտեսական աճի ազդեցությունը փոքր է գրաղվածության ապահովման գործում՝ իրական  $\angle \text{Ա-1}$  տոկոս աճը հանգեցնում է գրաղվածների թվի 0.19 տոկոսով ավելացմանը: Գնահատված մողելը ցոյց է տալիս, որ կարճաժամկետում (երկարաժամկետում նշանակալիությունը նվազում է) գրաղվածության փոփոխության վրա համեմատաբար մեծ և դրական ազդեցություն ունի սպառողական գների ինդեքսը: Դրա 1 տոկոս աճը հանգեցնում է գրաղվածների թվի 0.3 տոկոսով ավելացմանը: Սա համապատասխանում է ինֆյացիայի և գործազրկության միջև գոյություն ունեցող կապը ներկայացնող Ֆիլիպսի կողի տրամաբանությանը:

Մողելավորման արդյունքում պարզվել է, որ գրաղվածության նախորդ լագն ունի դրական ազդեցություն, քանի որ յուրաքանչյուր հաջորդ եռամսյակում նրանց մեծամասնությունը չի կրցնում իր աշխատանքը: Միաժամանակ չորրորդ լագն ունի բացասական ազդեցություն, որը բացատրվում է ինչպես բազայի էֆեկտով, այնպես էլ նրանով, որ աշխատանքային ոչ բարենպաստ պայմանները հանգեցնում են գրաղվածության կրճատմանը (երկրից արտագաղթողների 25.1%-ը գրաղված  $\xi^{38}$ ): Զբաղվածների շարքի փաստացի և մողելով գնահատված արժեքների միջև շեղումը փոքր է, ինչպես նաև առկա չէ հետերոսկեպտաստիկություն: Մողելում բացակայում է էնդոգենության խնդիրը, որը կարող է առաջնալ կախյալ և անկախ փոփոխականների միջև փոխադարձ կապի առկայության դեպքում:

Ատենախոսության մեջ հիմնավորվել է, որ գործազրկության կայուն բարձր մակարդակը և դրա վրա տնտեսական աճի թույլ ազդեցությունը պայմանավորված են հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրներով, տարածքային անհամաչափ զարգացմամբ և աշխատաժամերի՝ առանց համապատասխան վարձատրության ավելացմամբ:

Ատենախոսության երրորդ՝ «ՀՀ սոցիալական քաղաքականությունը ժողովրդագրական արդի իրավիճակում» գիտում նախ հետազոտվել է «ՀՀ սոցիալ-տնտեսական խնդիրների և ժողովրդագրական հիմնահարցերի փոխազդեցությունը: Ներկայացված հիմնախնդիրները հանգեցրել են առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքի աճին, ծնելիության անկմանը, արտագաղթին և բնակչության թվաքանակի կրճատմանը: Սրանք իրենց հերթին բացասաբար են անդրադառնում «ՀՀ տնտեսության վրա՝ բարդացնելով աշխատանքային ռեսուլտների վերարտադրության խնդիրները:»

Պետությունը, օրինակ, երեխայի ծննդյան միանվագ նպաստ սահմանելով, փորձում է խթանել ծնելիությունը<sup>39</sup>: Միաժամանակ սա անհրաժեշտ է, բայց ոչ բավարար: Ծնելիության խթանման և բնակչության թվաքանակի աճի համար հարկավոր է ստեղծել աշխատերու և կայուն եկամուտ ստանալու պայմաններ, քանի որ երեխաների խնամքը, կրթությամբ ապահովելը երկարաժամկետ և համապատասխան ֆինանսական միջոցներ պահանջող գործընթաց է:

<sup>38</sup> Աղյուրը՝ տե՛ս նոյն տեղում, էջ 80-81

<sup>39</sup> Աղյուրը՝ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» «ՀՀ կառավարության դրոշում, ընդունվել է 06.03.2014թ., ուժի մեջ մտել 03.04.2014թ.

Վերլուծվել են նաև «*սոցիալական քաղաքականության խնդիրները*» և դրանց լուծման ուժիները: Այսպես՝ ՀՀ-ում 2015թ. դադարեցվել է գործազրկության նպաստի տրամադրումը, ինչը հիմնավորվել է նրանով, որ դա «պասսիվ» քաղաքականության մոտեցում է, որի հետևանքով գործազրկությունների մոտ նվազում է աշխատելու ցանկությունը: Այս կապակցությամբ նախ հարկավոր է նշել, որ նպաստի միջին չափը ՀՀ-ում 2014թ. կազմել է 15995 դրամ<sup>40</sup>, որը շատ փոքր գումար էր և չէր կարող բավարարել նոյնին հիմնական պահանջմունքները՝ նվազեցնելով աշխատելու ցանկությունը: Միաժամանակ պահանջմունքներն անընդիմա աճում են, հետևաբար համեմության մի մակարդակի՝ մարդիկ ձգտում են անցնել հաջորդին: Բացի այդ, շատերն իրենց կենսամակարդակը դիտարկում են համեմատության մեջ (մյուսներից աղքատ են, թե հարուստ): Սա նրանց մոտ առաջացնում է բարեկցության առավել բարձր աստիճանի հասնելու ձգտում:

Տեղին է նշել նաև այն, որ մարդիկ աշխատում են ոչ միայն եկամուտ ստանալու, այլև մյուսների հետ շփվելու, աշխատանքային փորձ և կարողություններ ձեռք բերելու, մասնագիտական համայնքի անդամ դառնալու նպատակով: Սրանք ոչ եկամուային գործոններ են, որոնք դրդում են աշխատանք փնտրելու: Ուստի նշված պատճառաբանությամբ գործազրկության նպաստների տրամադրման դադարեցումը հիմնավոր չէր: Այն և աշխատանքով պահովված ծրագրերը լրացնում են միջանց և կարող են գործել միաժամանակ:

Բնակչության հիմնական պահանջմունքները բավարարելու տեսանկյունից կարևորվել է նաև նպաստների և կենսաթոշակների չափը: Ընդհանրապես դրանց հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում նվազագույն սպառողական զամբյուր և աղքատության շեմը: Նախ նշենք, որ Վերջինները թերագնահատված են ՀՀ-ում: Այսպես՝ նվազագույն սպառողական զամբյուրը հաշվարկվում է պարենայինի արժեքը բազմապատկելով 1.77 գործակցով: Վերջինը ներկայացնում է ՀՀ ԱՎԾ կողմից 2009թ. հարցումների արդյունքում բացահայտված սպառողական և պարենային զամբյուրների արժեքների հարաբերակցությունը: Հետևաբար այդ գործակիցը ցույց է տալիս գոյություն ունեցող իրավիճակը, բայց ոչ նվազագույն անհրաժեշտ բարիքների և ծառայությունների նկատմամբ պահանջի չափը: Նշենք, որ ընդունված մոտեցում է, որ 4 հոգուց բաղկացած ընտանիքը համարվում է աղքատ, եթե սպառողական ընդհանուր զամբյուրը առնվազն 3 անգամ չի գերազանցում պարենայինը<sup>41</sup>: Սա հարկավոր է հաշվի առնել մեկ շնչի հաշվով նվազագույն սպառողական զամբյուրի արժեքը հաշվարկելիս:

Բացի այդ, ըստ ՀՀ ԱՎԾ հաշվարկների (իհմնված ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված չափանիշների վրա)՝ նվազագույն սպառողական զամբյուրը, օրինակ, 2016թ. IV-րդ եռամսյակի միջին ընթացիկ գներով կազմել է շուրջ 55000 դրամ, իսկ ոչ պարենային զամբյուրը՝ 24000 դրամ<sup>42</sup>: Գները սովորաբար բարձրանում են, և բնակարանների ջեռուցման անհրաժեշտություն է առաջանում տարվա

<sup>40</sup> Աղյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի վիճակագրական տարեգիրը, Երևան 2017թ., էջ 97

<sup>41</sup> Institute for Research on Poverty, How Is Poverty Measured In The United States? Available at <http://www.irp.wisc.edu/faqs/faq2.htm>

United States Census Bureau, How the U.S. Census Bureau Measures Poverty, available at

[https://www.census.gov/library/visualizations/2014/demo/poverty\\_measure-how.html](https://www.census.gov/library/visualizations/2014/demo/poverty_measure-how.html)

<sup>42</sup> Աղյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-դեկտեմբերին, Երևան 2017թ., էջ 243

Նշված ժամանակահատվածում: Հետևաբար այս գումարները բավարար չեն անձի նվազագույն պահանջները բավարարելու համար: Դրանք գնահատելու նպատակով հարկավոր է ներգրավել համապատասխան ղործուների մասնագետների (քժիշկներ, տնտեսագետներ, սոցիոլոգներ և այլն):

Աղքատության վերին շեմը (ըստ սպառման ագրեգատի) 2016թ. կազմել է 40867 դրամ, որը ցածր է նոյնիսկ թերագնահատված նվազագույն սպառողական զամբյուի արժեքից (ինչը նորմադիմացիային իմաստով՝ անընդունելի է): Պարենային աղքատության գիծը նոյն թվականին կազմել է 23313 դրամ<sup>43</sup>, ինչը փոքր է պարենային զամբյուի արժեքից: Բացի այդ, համաձայն ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության տվյալների՝ 2014-2016թթ. թերմնվածության տարածվածությունը ՀՀ-ում միջինում կազմել է 4.4%<sup>44</sup>, որը շուրջ 2 անգամ գերազանցում է ԱՎԾ կողմից ներկայացված ծայրահետ աղքատության մակարդակի ցուցանիշը: Սա նոյնպես վկայում է այն մասին, որ ՀՀ ԱՎԾ կողմից ներկայացված պարենային աղքատության գիծը ևս թերագնահատված է:

Կենսաթոշակների և նպաստների նոյնիսկ միջին չափը չի համապատասխանում ո՞չ նվազագույն սպառողական զամբյուին, ո՞չ էլ աղքատության շեմին: Այսպես՝ նշանակված կենսաթոշակի և մեկ ընտանիքի ամսական նպաստների միջին չափն ավելի փոքր է (2016թ. կազմել են համապատասխանարար 40396.9 դրամ<sup>45</sup> և 31350 դրամ<sup>46</sup>): Հաշմանդամության նպաստները ևս մեծ գումարներ չեն կազմում: Այսպես՝ Իին խմբի հաշմանդամության համար նպաստի միջին չափը 2016թ. կազմել է 21498.5 դրամ<sup>47</sup>: Դեղերի բարձր գների պայմաններում սա չի կարող բավարարել առողջական բարդ խնդիրներ ունեցող մարդու հիմնական պահանջմունքները:

Ուստի անհրաժեշտ է վերանայել նվազագույն սպառողական զամբյուի, աղքատության շեմի, կենսաթոշակների, նպաստների և նվազագույն աշխատավարձի (վերջինի հետ կապված խնդիրները ներկայացվել են ատենախոսության երկրորդ գլուխությամբ) հաշվարկման մեխանիզմները: Դրանք սահմանելիս որպես ուղեցույց կարող է ծառայել հիմնական պահանջմունքների բավարարման մոտեցումը (այն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է “Basic Needs approach” անվամբ)<sup>48</sup>: Հիմնական պահանջմունքների շարքին են դասվում պահանջը սննդի, մաքուր ջրի, հագուստի, բնակարանային անհրաժեշտ պայմանների, հասարակական փոխադրամիջոցների, կրթության, առողջապահական ծառայությունների նկատմամբ<sup>49</sup>: Հարկավոր է հաշվի առնել նաև բնակչության կարողությունների և հնարավորությունների զարգացման

<sup>43</sup> Աղյուրը՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2017թ., էջ 40

<sup>44</sup> Food and Agriculture Organization of the United Nations, FAOSTAT, available at <http://www.fao.org/faostat/en/#country/1>

<sup>45</sup> Աղյուր՝ ՀՀ ԱՎԾ, Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին, Երևան 2017թ., էջ 434

<sup>46</sup> Աղյուրը՝ տե՛ս նոյն տեղում, էջ 442

<sup>47</sup> Աղյուրը՝ տե՛ս նոյն տեղում, էջ 444

<sup>48</sup> Նշենք, որ ՀՀ ԱՎԾ-ն հրապարակում է նաև բազմաչափ աղքատության մակարդակը, որի հաշվարկման հիմքում դրված են բնակչության հիմնական կարիքների գնահատականները: Միամանակ ըստ հրապարակման՝ 2016թ. այս կազմել է 27.8%, որը 1.6 տոկոսային կետով ցածր է սպառման ագրեգատի միջոցով հաշվարկված աղքատության մակարդակից: Այս առումնվ կարծում ենք, որ ցուցանիշը և դրա բարարիցները վերանայման կարիք ունեն:

<sup>49</sup> ILO, International Labor Office, With an Introduction by James P. Grant, Employment, Growth and Basic Needs: A One-World Problem, Praeger Publishers, New York, 1977, pp. 31-33

մոտեցումը (Վերջինն արտասահմանյան գրականության մեջ հայտնի է “Capabilities approach” անվամբ<sup>50</sup>): Այսինքն՝ հարկավոր է բարեկեցության բարձր մակարդակի համեմատ և մարդկային կայուն զարգացման համար ստեղծել պայմաններ:

Աստեղախոսությունը եզրափակվում է եզրակացություններով և առաջարկություններով: Ներկայացվել են հետևյալ եզրակացությունները.

1. Առաջնահերթ լուծում պահանջող կարող են դիտարկվել այն խնդիրները, որոնք հրատապ լինելուց բացի ունեն սոցիալապես ընդգրկուն բնույթ և բնակչության կողմից ընդունվել են որպես բարեկեցությանը խոշընդուռող գիտակող գործոններ: Դրանց լուծումը պետք է բխի սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության սկզբունքներից, գոտվի հիմնարար արժեքային համակարգի շրջանակում:

2. Հայաստան ունի լուծում պահանջող մի շարք սոցիալական խնդիրներ, որոնցից առաջնահերթ են՝ գործազրկությունը, անհավասարության բարձր մակարդակը, աղքատությունը, որակյալ առողջապահական ծառայությունների և կրթության ոչ բավարար հասանելիությունը:

3. <<-ում գործազրկության բարձր մակարդակը և դրա վրա տնտեսական աճի թույլ ազդեցությունը պայմանավորված են հատկապես տնտեսության ճյուղային կառուցվածքի խնդիրներով, տարածքային անհամաշաբ զարգացմամբ և աշխատաժամերի՝ առանց համապատասխան վարձատրության ավելացմամբ:

4. Անհավասարության մակարդակը խորանում է, ինչը պայմանավորված է տարերե գործոններով: Դրանցից են՝ քաղաքական ունտայի հետապնդումը, կոռուպցիան, անհավասարությունը մարդկային կապիտալում, թույլ արհմիությունները:

5. Գույքահարկի կշիռը << համախմբված բյուջեի հարկային եկամուտներում կայուն բնույթ է ունեցել 2001-2016թթ., իսկ գույքի կադաստրային բազային արժեքի վերագնահատումը տեղի է ունեցել մեծ ընդհատումներով: Հետևաբար անհրաժեշտ է վերանայել հարկային քաղաքականությունը՝ պետական եկամուտների ձևավորման հարցում ավելացնելով հարստության հարկման բաժինը:

6. Աղքատությունը բարձր է և տարբերվում է ըստ տարածաշրջանների: այն տատանվում է 16-45%-ի շրջանակում: Առկա է նաև աշխատողների, թոշակառուների և երեխաների աղքատությունը: Հայաստանում չի հաջողվել հաղթահարել ծայրահեղ աղքատությունը:

7. <<-ում նվազագույն և միջին աշխատավարձերի հարաբերակցությունը (2016թ. կազմել է շուրջ 42%) ցածր է Սոցիալական իրավունքի եվրոպական հանձնաժողովի կողմից ընդունված շեմից (50-60%): Նվազագույն աշխատավարձի ոչ բավարար մակարդակը բացասաբար է անդրադառնում աշխատողների կենսամակարդակի վրա:

8. Աշխատողների աղքատությունը պայմանավորված է նաև աշխատավարձի ցածր գնողունակությամբ: Չնայած անվանական աշխատավարձն աճել է, բնակչության վճարունակությունը երկու անգամ ավելի քիչ է ավելացել 1999-2016թթ.:

9. Սպառումն իրականացվում է նաև վարկերի կամ պարտքի հաշվին, որոնց մարումը << բնակչության համար երթեմն բարորություն է ներկայացնում: Աստեղախոսության մեջ բերվել են օրինակներ, որոնք վկայում են բնակչության պարտավորությունների բարձր մակարդակի մասին:

<sup>50</sup> Sen A., Development as Freedom, Oxford University Press, 2001, See particularly chapter 4

10. Աղքատության հետևանքով որակյալ առողջապահական ծառայությունները մատչելի չեն բնակչության զգայի մասի համար: Այդ մասին վկայում է այն, որ բժշկական խորհրդատվության կամ բուժման դիմաների տեսակարար կշիռն էապես տարբերվում է ըստ կենսամակարդակի:

11. Սոցիալ-տնտեսական վատ պայմանների հետևանքով 2016-2017 ուստարում դպրոցից հեռացել է 174 երեխա, իսկ որակյալ բարձրագույն կրթություն ստանալը խնդրահարույց է բարձր ուսման վարձերի և ցածր վճարունակության պատճառով: Սա բացասաբար է անդրադառնում մարդկայն, հետևաբար նաև տնտեսական զարգացման վրա:

12. Սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները բացասաբար են ազդել ՀՀ ժողովրդագրական իրավիճակի վրա: Ներկա պայմանների պահպանման դեպքում կրարդանան ծերացող աշխատանքային ռեսուրսների վերարտադրության խնդիրները:

13. Գործազրկության նպաստների տրամադրման կասեցումը նպատակահարմար չէր, քանի որ ատենախոսության մեջ բերված հիմնավորումները վկայում են, որ նպաստի այս տեսակը և աշխատանքով ապահովման ծրագրերը լրացնում են միմյանց և կարող են գործել միաժամանակ:

14. ՀԿ կողմից ներկայացված նվազագույն սպառողական զամբյուի արժեքը թերագնահատված է: Այն ներկայացնում է գոյություն ունեցող իրավիճակը, բայց ոչ նվազագույն անհրաժեշտ բարիքների և ծառայությունների նկատմամբ պահանջի չափը:

15. Կենսաթոշակների և նպաստների նույնիսկ միջին չափը բավարար չէ բնակչության հիմնական պահանջմունքները բավարելու համար:

Հիմնվերով վերոնշյալ եղանակացությունների վրա՝ ատենախոսական աշխատանքում կատարվել են հետևյալ առաջարկությունները.

1. Առաջարկվել է մեծ ուշադրություն դարձնել տնտեսության ճյուղային կառուցվածքի բարեփոխումներին: Հարկավոր է զարգացնել արտադրողական և զբաղվածության աճին նպաստող ոլորտները: Այս տեսանկյունից կարևորվել է պետության կողմից ենթակառուցվածքների բարելավման գործում ներդրումների իրականացումը, ինչպես նաև մասնավոր ներդրողներին աջակցության տրամադրումը:

2. Տարածքային անհամաչափությունները մեղմելու նպատակով առաջարկվել է բարելավել բոլոր բնակավայրերի ներդրումային միջավայրը, օժանդակել փոքր ու միջին ձեռներեցությանը, զարգացնել ենթակառուցվածքները, խթանել զրուաշջրությունը: Կարևորվել է նաև աշխատանքի արտադրողականության բարձրացնումը, քանի որ ներդրողներին հետաքրքիր է նաև այն, թե ինչպիսին են աշխատումի որակական հատկանիշները:

3. Առաջարկվել է վերանայել հարկային քաղաքականությունը՝ ավելացնելով հարստության հարկման բաժինը: Անհրաժեշտ է բարելավել գույքի կադաստրային արժեքի գնահատման մեխանիզմները:

4. Առաջարկվել է ստեղծել համագնարի սկզբունքով գործող առողջության ապահովության համակարգ: Պետության և գործատուների կողմից կարող է ֆինանսավորվել ապահովագրավճարների մի մասը: Երկարաժամկետում այն կարող է դառնալ պարտադիր, ինչը մասշտարի էֆեկտի շնորհիվ հնարավորություն կտա նվազեցնել ծախսերը, հետևաբար նաև դրա գինը:

5. Կրթության որակի բարձրացման նպատակով առաջարկվել է պետության կողմից օժանդակել համալսարաններին արտասահմանյան լավագույն մասնագետների հոդվածների և գրքերի գնման ու թարգմանության հարցում: Հարկավոր է նաև խստացնել համակարգի նկատմամբ վերահսկողությունը, ուժեղացնել կրթական հաստատությունների և աշխատանքի շուկայի միջև կապը:

6. Առաջարկվել է ավելացնել պետական բյուջեից կրթության և առողջապահության ոլորտների ֆինանսավորումը: Այստեղ կատարվող ծախսերի մեջ պետության մասնաբաժինը մեծ է հատկապես բարեկեցության բարձր մակարդակ ունեցող երկրներում: Նպատակահարմար է, որ <<-ում ևս աստիճանաբար անցում կատարվի նման քաղաքականության:

7. Առաջարկվել է ավելացնել պետության կողմից իրականացվող սոցիալական ծախսերը, քանի որ դրանք էական նշանակություն ունեն աղքատության կրճատման տեսանկյունից: Մասնավորապես սոցիալական բնակարանաշինության ծրագրերի իրականացումը հնարավորություն կտա կրճատել բնակարանային խնդիրները՝ նպաստելով տնտեսական աճին:

8. Սոցիալական ծախսերի ֆինանսվորման նպատակով առաջարկվել է նպատակային քայլեր ծենոնարկել ստվերային տնտեսության կրճատման ուղղությամբ: Այս առողմով կարևոր է հատկապես կոռուպցիայի հաղթահարումը: Սա, իհարկե, ընդգրկված է << կառավարության առաջնահերթությունների շարքում, սակայն այս ուղղությամբ մեծ հաջողություններ դեռևս չեն գրանցվել:

9. Առաջարկվել է վերանայել նվազագույն սպառողական զամբյուտի, նվազագույն աշխատավարձի, նպաստների, կենսարժակների հաշվարկման մեխանիզմները՝ ուղեցույց դիտարկելով բնակչության հիմնական պահանջմունքների բավարարման և կարողությունների զարգացման մոտեցումները:

10. Առաջարկվել է վերանայել աղքատության շեմը, քանի որ այն ցածր է նույնիսկ թերագնահատված նվազագույն սպառողական զամբյուտի արժեքից (ինչը նորմատիվային հմաստով անընդունելի է):

## **Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ գիտական հրապարակումներում՝**

1. Մարգարյան Ս., Զանգվածային գործազրկության պատճառներն ու դրանց հաղթահարման ուղիները <<-ում, Ֆինանսներ և Էկոնոմիկա, 7-8 (203-204), Երևան 2017թ., էջ 84-93

2. Մարգարյան Ս., Տնտեսական և սոցիալական զարգացման փոխազդեցության հիմնախնդիրները, <*ՊՏՀ*, Բանքեր, 4 (44), Երևան 2016թ., էջ 28-42

3. Մարգարյան Ս., Մարդկային կապիտալի զարգացման սոցիալական տեսանկյունները, Գիտելիք, Նորաստեղծություն և զարգացում, <*ՊՏՀ*, 25-րդ գիտաժողովի նյութեր, Երևան 2015թ., էջ 195-200

4. Մարգարյան Ս., Անհավասարության կրճատումը՝ որպես տնտեսական զարգացման սոցիալական առաջնահերթություն, Ֆինանսներ և Էկոնոմիկա, 7-8 (169-170), Երևան 2014թ., էջ 29-31

## **МАРГАРЯН САМВЕЛ ЮРИКОВИЧ**

### **СОЦИАЛЬНЫЕ ПРИОРИТЕТЫ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ**

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.01 – “Общая экономика”.

Защита диссертации состоится 16 марта 2018 года в 13:30 часов, на заседании Специализированного совета по экономике 015 ВАК РА, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0009, г. Ереван, ул. Х. Абовяна 52.

### **РЕЗЮМЕ**

В нормативном смысле цель любого, в том числе и экономического прогресса является человеческое развитие. Эта идея в разных формулировках выражается у многих авторов. В частности, согласно Иммануилу Канту, рассмотрение человека как цель, а не средство, является категорическим императивом. Однако, желание не всегда совпадает с реальностью, и экономические достижения часто не сопровождаются повышением уровня жизни большинства населения, что является следствием нарушения связи между экономической и социальной сферами.

Технологии значительно изменились, производственные возможности увеличились, особенно со второй половины прошлого века, а глобальный ВВП продолжает расти. В то же время неравенство углубилось, миллионы людей живут в нищете, вопросы доступа к образованию и здравоохранению не решены. В дополнение к этому нарастают экологические проблемы, и, как показывают исследования, их воздействие наиболее значимо для бедного населения.

Тема диссертации особенно актуальна для Республики Армения, поскольку экономический рост сопровождается массовой безработицей, бедностью, увеличением неравенства, эмиграцией, сокращением рабочей силы и старением населения. Социальная политика в свою очередь также имеет много недостатков из-за коррупции, теневой экономики, низкого финансирования и недостаточного уровня эффективности расходов.

Целью данной работы является определение социальных приоритетов экономического развития Армении, выявление препятствий и возможностей для их реализации, а также предложение путей улучшения социальной политики.

Для достижения поставленной цели в исследовании были выдвинуты и решены

следующие задачи:

- изучение международного опыта выбора социальных приоритетов экономического развития,
- методологическое обоснование выбора социальных приоритетов Армении,
- исследование препятствий и перспектив развития человеческого капитала,
- анализ причин высокого уровня неравенства, бедности и возможных путей их преодоления,
- выявление причин массовой безработицы и путей увеличения занятости,
- анализ проблем и способов улучшения социальной политики.

Полученные результаты имеют теоретическую, практическую и методологическую значимость, а некоторые из них представляют научную новизну. В частности:

✓ Разработан методологический подход для выбора социальных приоритетов экономического развития. Приоритетными могут быть те вопросы, которые не только требуют неотложных решений, но и относятся к большинству населения и воспринимаются ими в качестве основных факторов, препятствующих благосостоянию. Решение этих вопросов должно быть найдено в рамках фундаментальной системы ценностей, основываться на принципах социальной справедливости и экономической эффективности.

✓ Для более достоверной оценки условий жизни населения, а также повышения эффективности социальной политики, в качестве основы расчета минимальной потребительской корзины, минимальной заработной платы, пенсий и пособий в Армении были предложены взаимодополняющие подходы: “Удовлетворение основных потребностей” и “Развитие способностей”.

✓ С помощью эконометрического моделирования было обосновано, что экономический рост имеет слабое влияние на сокращение безработицы в Армении, основными причинами чего являются проблемы отраслевой структуры экономики, неравномерное развитие регионов и продление рабочего времени без соответствующей компенсации. В качестве зависимой переменной модели был использован не уровень безработицы, а число занятых. Это обусловлено тем, что снижение уровня безработицы в значительной степени зависит от эмиграции безработных.

Результаты этой работы имеют важное значение для определения социальных приоритетов экономического развития, а также для разработки макроэкономической политики. Их могут использовать специалисты и студенты, которые заинтересованы в проблемах социально-экономического развития.

## **SAMVEL YURIK MARGARYAN**

### **SOCIAL PRIORITIES OF ECONOMIC DEVELOPMENT**

The abstract of the dissertation for pursuing the PhD degree of Economics in the field of 08.00.01 – "General Economics".

The defense of the dissertation will take place at 13:30, on March 16, 2018 at the meeting of Specialized Council 015 in Economics of Supreme Certifying Commision of the RA acting at Yerevan State University. Address: 52, Abovyan Str., Yerevan, 0009.

### **SUMMARY**

In the normative sense, the goal of any progress (including economic) is human development. This idea is expressed in different formulations by many authors. In particular, according to Immanuel Kant, it is a categorical imperative to view an individual as a goal rather than means. However, the ideal does not always coincide with reality, and economic achievements are often not accompanied by an increase in living standards among the majority of the population, and this is because the link between the economic and social spheres is broken.

Technologies have changed significantly, production possibilities have increased, especially since the second half of the last century, and the global GDP continues to grow. At the same time inequality has deepened, millions of people are living in poverty and problems with access to education and healthcare have not been solved. In addition to these, the issue of environmental pollution is escalating, and research has shown that its impact is more significant on the poor population.

These issues are also relevant for Armenia, where economic growth is accompanied by mass unemployment, poverty, an increasing inequality, emigration, decreasing labor force and an aging population. Social policy, in its turn, has many shortcomings, due to corruption, the shadow economy, not enough funding, and lack of cost efficiency.

The objective of this research is to highlight the social priorities of economic development for Armenia, reveal obstacles to and opportunities for their implementation, and suggest ways improving social policy.

For this purpose, the following tasks have been set and solved:

- to study the international experience of choosing social priorities of economic development,
- to methodologically justify the selection of Armenia's social priorities,
- to explore the obstacles to and prospects of human capital development,

- to analyze the causes of inequality and poverty and to highlight ways of overcoming them,
- to reveal the reasons for mass unemployment and ways of enhancing employment,
- to analyze social policy issues and ways to improve it.

The results of the work have theoretical, methodological and practical importance. The following can be outlined among them as scientific novelties:

- ✓ A methodological approach to choose social priorities of economic development has been developed. Thus, issues can be addressed as priorities not only because they need an urgent solution, but also because they impact most people and have been acknowledged by them as the main obstacles to welfare. Their solutions should be found within the framework of a fundamental value system and based on the principles of social justice and economic efficiency.
- ✓ In order to trustworthily assess the living conditions of the population and to increase the effectiveness of social policy, basic needs and capabilities approaches are proposed as guidelines for the calculation of a minimum consumer basket, minimum wage, pensions and benefits in the Republic of Armenia.
- ✓ With the tools of econometric modeling, it has been proven that the economic growth in Armenia has a weak impact on the reduction of the unemployment rate. The main reasons for this distortion are the issues of the sectoral structure of the economy, asymmetries in territorial development and the extension of working time without corresponding compensation. In the model, the number of the employed (not the unemployment rate) is considered as a dependent variable, which is explained by evidence that reduction in the unemployment rate is largely driven by emigration of the unemployed.

The results of this research are crucial for the identification of economic development priorities as well as for implementing macroeconomic policies. They can be used by specialists and students who are interested in issues of socio-economic development.

A handwritten signature in blue ink, appearing to read "Hrachia Stepanyan".